Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2013թ. սեպտեմբերի 13 -ի նիստի

(արձանագրություն N 2)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. մայիսի 2-ի 471/-Ն որոշմամբ հաստատված <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 39-րդ կետով՝ համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. ***Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխությունը.***

23-րդ կետը կարդալ՝

23. Մրցույթով անցած է համարվում այն թեկնածուն, որը հավաքել է խորհրդի նիստին ներկա անդամների թվի ձայների մեծամասնությունը: Մեկից ավելի թեկնածուների կողմից մրցույթը հաղթահարելու դեպքում համալսարանի ռեկտորին իրավունք է վերապահվում իր հայեցողությամբ պայմանագիր կնքել նրանցից մեկի հետ:

1. ***Համալսարանի ֆակուլտետի դեկանի ընտրության կարգում կատարել հետևյալ փոփոխությունը.***

21-րդ կետը կարդալ՝

21. Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել է Համալսարանի գիտական խորհրդի նիստին ներկա անդամների (ֆակուլտետի խորհրդում ընտրության անցկացման դեպքում՝ ֆակուլտետի խորհրդի նիստին ներկա անդամների) ձայների պարզ մեծամասնությունը:

2. ***Համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության կարգում կատարել հետևյալ փոփոխությունը.***

20-րդ կետը կարդալ՝

20. Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել է խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

ՌԵԿՏՈՐ՝ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ